Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Կատարողական վարույթը կասեցնելու մասին

«08» հունվարի 2019թ. ք. Մեղրի

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Սյունիքի մարզային բաժնի Կապան-Մեղրի տարածաշրջանային բաժանմունքի հարկադիր կատարող արդարադատության կապիտան Լենիկ Պողոսյանս, ուսումնասիրելով 15 մայիսի 2018թ-ին վերսկսված թիվ 03859414 կատարողական վարույթի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կողմից տրված թիվ ՍԴ2/0379/02/17 կատարողական թերթի համաձայն պետք է Հովհաննես Էդիկի Մինասյանից հօգուտ <<ՎՏԲ-Հայաստան բանկ>> ՓԲԸ-ի բռնագանձել 1.930.883,10 ՀՀ դրամ և տոկոսներ:
ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կողմից տրված թիվ ՍԴ2/0021/02/18 կատարողական թերթի համաձայն պետք է Հովհաննես Էդիկի Մինասյանից հօգուտ <<ՎՏԲ-Հայաստան բանկ>> ՓԲԸ-ի բռնագանձել 1.358.423,50 ՀՀ դրամ և տոկոսներ:
ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կողմից տրված թիվ ՍԴ2/0026/02/18 կատարողական թերթի համաձայն պետք է Հովհաննես Էդիկի Մինասյանից հօգուտ <<ՎՏԲ-Հայաստան բանկ>> ՓԲԸ-ի բռնագանձել 217.278,90 ՀՀ դրամ և տոկոսներ:
ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կողմից տրված թիվ ՍԴ2/0034/02/18 կատարողական թերթի համաձայն պետք է Հովհաննես Էդիկի Մինասյանից հօգուտ <<ՎՏԲ-Հայաստան բանկ>> ՓԲԸ-ի բռնագանձել 770.588,10 ՀՀ դրամ և տոկոսներ:
ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կողմից տրված թիվ ՍԴ2/0434/02/17 կատարողական թերթի համաձայն պետք է Հովհաննես Էդիկի Մինասյանից հօգուտ <<Կոնվերսբանկ>> ՓԲԸ-ի բռնագանձել 138.854,80 ՀՀ դրամ և տոկոսներ:
Կատարողական գործողությունների ընթացքում պարզվել է, որ պարտապան Հովհաննես Էդիկի Մինասյանի անվամբ հաշվառված է <<Mercedes-Benz C 280>> մակնիշի, 80 cc 055 պետ համարանիշի ավտոմոքենան, որը գտնում է վթարված վիճակում և <<Արմէքսպերտիզա>> փորձագիտական կազմակերպության փորձագետի եզրակացության համաձայն հնարավոր չի եղել որոշել մեքենայի շուկայական արժեքը: Պարտապանի անվամբ բռնագանձման ենթակա այլ գույք կամ դրամական միջոցներ չեն հայտնաբերվել:
Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով <<Սնանկության մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվա՛ի 2-րդ մասով, <<Դատական ակտերի հարկադիր կատարման մասին>> ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով և 37-րդ հոդվածի 8-րդ մասով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Կասեցնել 15.05.2018թ-ին վերսկսված թիվ 03859414 կատարողական վարույթը 60-օրյա ժամկետով:
Առաջարկել պահանջատերերից որևէ մեկին կամ պարտապանին 60-օրյա ժամկետում սեփական նախաձեռնությամբ սնանկության հայց ներկայացնել դատարան:
Սույն որոշումը երկու աշխատանքային օրվա ընթացքում հրապարակել www.azdarar.am ինտերնետային կայքում.
Որոշման պատճենն ուղարկել կողմերին.
Որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան կամ վերադասության կարգով՝ որոշումը ստանալու օրվանից տասնօրյա ժամկետում:
<<Դատական ակտերի հարկադիր կատարման մասին>> ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂ՝
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՊԻՏԱՆ Լ. ՊՈՂՈՍՅԱՆ